

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH
MONTREAL



5242 Park Ave.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ
ՄՈՆՏՐԵԱԼ

PARISH COUNCIL

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19 Ապրիլ 1964

Գերաշնորհ Տէր Սիոն Արթեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հիւս. Ամերիկայի եւ Գանատայի Հայոց
Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ

Գերաշնորհ Սրբազան Հայր,


Այսու կը փութանք տեղեկացնել Ձերդ Սրբազնութեան թէ
8 Մարտ 1964 Կիրակի երեկոյան Ջայ Տան մէջ տեղի ունեցաւ Ծուխիս
Ընդհանուր Անդամական Ժողովը, նախագահութեամբ Հոգ. Տ. Վաղբէն
Վրդ. Թաղոյեանի եւ մասնակցութեամբ 75 անդամներու, որու ընթաց-
քին ընտրուեցան նոր Ծխական Խորհրդոյ անդամները:


Ընդհանուր Ժողովը որոշեց այս անգամ եօթ անձերէ բաղ-
կացնել կազմը փոխանակ իննի: Նորընտիր կազմը իր անդրանիկ նիստը
գումարեց 11 Մարտ Զորեքշաբթի երեկոյան Հայ Տան մէջ ու իր Դիւանը
ընտրեց հետեւեալ կերպով.

- Ատենապետ: ՏՕ. ԱրթՕ Տէմիրճեան
- Բ. Ատենապետ: Մէթր Հայկազուն Սիւմպիլեան
- Ատենադպիր: ՏՕ. Անդրանիկ Հազարեան
- Բ. Ատենադպիր: Պարոն Արամ Կուտսուզեան
- Գանձապետ: Պարոն Վահէ Ալթունեան
- Բ. Գանձապետ: Պարոն Անդրանիկ Թավուքճեան
- Խորհրդական: Պարոն Խորէն Տողրամաճեան

Հաղորդելով ընտրութեան արդիւնքը Ձերդ Սրբազնութեան
կը խնդրենք սոյն կազմի վաւերացումը, եւ այս առթիւ դարձեալ յայտ-
նելով մեր որդիական անկեղծ զգացումները կը հայցենք արեւշատութի-
ւն եւ երկար կեանք Ձերդ Սրբազնութեան:

Մատչելով ի համբոյր
Ձեր Սուրբ Աջոյն
ի Դիմաց Ընդ. Անդամական Ժողովի


Խ. Տողրամաճեան
Ատենադպիր
Եւ


Հ. Սիւմպիլեան
Ատենապետ

Ներփակ - Անդամներու հասցէներն
ու հեռ. թիւերը.